Այս ամիս մատուցանելով նաև Չեր Բարձր Արքայնութեան իմ որդիական խորին ակնածութիւնս, Մեծ յարգանքս 13 Նոյիս 1877 Ս. Մ. Արքայնութեան

Ա. մեծ. Ս. Պատրիարք Հայր Չեր Արքայնութեան 703 թիւ հրատարակելով ընդունած ատենս անձնական ծանր զգացմանցս ազգու հրաժարելու որոշումը զըստուելով, սրահ մը այսպիսի փախուկ ատեն գործող ազգին գործերը երեսի վրայ մտալ յստաջ գալիք անտեղութեանց պատճառ չտալու բռնեմ ետանդս զիս արգիլեց այսպիսի քոյլ մը տանելէ. ուստի և ըստ ոյսմ Չեր Արքայնութեան ներկայանալով խոտտոցոյ ընդունիլ որոշութեան միւս որոշութեանցս ալ ընդունելուն թէութեամբ, բոց երկու անգամ ի պաշտօնատեղին ներկայանալէ ետքը դարձեալ մեծա-

մանաթիւն չգոյանալը ցուօք անձնալով՝ կը պարտաւորեմ այն դրոս Չեր Արքայնութեան խնայունել որ ինքս ալ այլևս չզիտի կարենամ շարունակել, վստահ զի չեմ կրնալ գործս երեսի վրայ թողլով գալ այդ ժամալածաւ ըլլալու համար: Ուստի այն հրաժարագիրս ընդունելից խնդրելով Մեծ Չեր Արքայնութեան 21 Յուլիս 1877 ամենախանարհ ծառայ Վ. Պոլիս

Արքայնութեան նախագահ յաւերցոյց որ Մ. Րատեան Մկրտիչ և Տօբոս Փէլտրմալճեան էֆէնդիներն թէ և հրաժարագիր չունին, բոց բերանայի հրաժարական մատուցած են:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Կանոնադրութիւնը արամադրութիւն մ'ունի, որով Սահմանադրութեան չեղելով և անոր հետ հաշտուելով Քաղ. Չարլոյն ընտրութիւնը փակեալ ցանկի վրայ կատարելու դրութիւնն հաստատած է: Կանոնադրութիւնը շինուած միջոցին՝ անոր հեղինակին՝ այն է լուսահայր Ռուսինեան էֆէնդիներն և իմ մէջ բաւարան վիճարանութեան նիթ եղած էր այս կէտը. այն ատեն սա խորհարար կար՝ որ երեսօթական խորհրդարանին ներս մտած ատեն բռնաբռնելն ինչ անուն որ հանեն, Քաղ. Չարլոյն անգամ չըլլած. այլ Պատրիարքին՝ որ գործող իշխանութեան զուտն է, կանխազիտցած և ուղած անձերը լինին: Եւ այս ցանկ էթէ միայն Պատրիարքին կողմէ ներկայացուի, ուրիշ անտեղութիւններէ դատ թերևս ցանկէն դուրս մնացող անձինքը վտայնէ, և սակէ հակաակութիւն ծագի, ուստի խորհրդարան և կանոնադրութեամբ ընդունեցինք որ ատենապետաց զիւանը պատրաստէ այդ ցանկը, Ս. Պատրիարքին խորհրդակցութեամբ կանխաւ որոշելով այնպիսի ընտրելիներ՝ որ զիւրութիւն ու կարողութիւն ունենան գործելու. և թէ իրենց և թէ Ս. Պատրիարք Հոր հաւանած անձինքն ըլլան, կամ զէթ Ս. Պատրիարքն անոնց վրայ զխտորութիւն չունենայ: Կտական պայման մ'ալ կոյ, թէ և ծածկուած, այն է կանխաւ ընտրուելի անձանց հաճութիւնն աւանդ, կը ցա-

ւիմ որ սոս անգամ այսպէս չէ եղած: Ուստի կատարուիմ որ 10 ին հրաժարականն անմիջապէս ընդունուի. իսկ մնացեալ 4 ինն՝ ոչ, և ատենապետաց զիւանը հրատարակ, հրաժարականին չընդունուած այդ 4 անդամներն ալ կանչուին, միտտեղ խորհրդակցելով՝ 20 անձանց նոր ցանկ մը պատրաստեն և բերեն ծառայիս: Սակէ դատ՝ այն առաջարկութիւնն ալ՝ զոր արդէն քանի մը երեսօթականաց հետ ստորագրեալ յանձնած ենք զիւանին՝ Պիտեմէի խնդրոյն ստիպողականութիւն արուելու համար, կը խնդրեմ որ նկատուի թեան ամուսի. Պատրիարքարանի պաշտօնեցոյ՝ որը 4, որը 5 ամսական ատեն իր ունին. Քաղ. Չարլոյն էթէ գոյ ամենն ալ անոր վրայ պիտի թափին և անեն լիբին պիտի ուղեն:

Սահմանի իմ առաջարկութիւնս գրով կը ներկայացնեմ և կը խնդրեմ որ Չարլոյն քուէին ենթարկէր:

ԵԱԶՊԱՋ Ն. ԷՃ. — Ես ալ պիտի ձայնակցի Փախուղեան էֆէնդի ստաջարկութեանն՝ էթէ սա երկու կէտերն չըլլային սոջևնիս. առաջին՝ ատենապետաց զիւանը չկրնար մարդարանալ թէ՛ արդեօր իւր ընտրելիները Քաղ. Չարլոյն պաշտօնը պիտի ընդունին, և երկրորդ՝ թէ այն անձինքն՝ որ պիտի ընտրուին, ազգին օգտակար պիտի ըլլան թէ ոչ: Բոց ես սա զխտորութիւնը կընեմ Չարլոյն՝ թէ պիտի է մեր ընտրած անձերը յարգենք և մեծարենք, որպէս զի ատենի փախուկ ժամանակի մէջ առանց Քաղ. Չարլոյն մնալու զժողովութեանը չհանդըսինք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՃ. — Դահլոյղ էֆէնդի պիտի զխտորութիւն մ'ըրաւ, որուն կողմէ երկու խտրով պատասխանել, Բաւ թէ պիտի է յարգենք ընտրելիներն՝ որ առանց Քաղ. Չարլոյն չմնանք: Յարգել՝ ինչ ըսել է չեմ հասկընար. էթէ անպատուութիւն մը կոյ եղած՝ այն թող ըսեն. բոց ազոջանք ու պատուար ընելու ժամանակն անցած է. Քաղարանի ժողովականութեան պաշտօնը ազգին մէջ հախուած քանի մը մարդոց սեփականու-

թիւնը չէ. ևս ատիկա չեմ ընդունիր երբէք, ազգը շատ մարդ ունի այդ պաշտօնը վարելու կարող և յարմար. թող ինձ յանձնուի, ևս սա հրաժարեալ 10 անձանց տեղ 20 մարդ ցոյցունեմ առանց ինձի: Միթէ ազգին մէջ մարդ կը պիտի Քաղ. Չարլոյն պաշտօնը վարելու էթէ Արքայնութեան Հայրը և ատենապետաց զիւանը չեն կրնար ընտրելի դանել, թող ըսեն մեզ. սոյս թէ ոչ այն զխտորութիւնն՝ որ նախորդ Քաղ. Չարլոյն ակնարկելու համար մէջ բերուեցաւ, չեմ ընդունիր. չիայ դայն անպատուօղ և Հաւատացէք՝ որ էթէ զրամական վիճակիս շտիտի և նոր պարտուց առաջն ատենի, սոջատօնի եկողներ շատ կըլլան:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊՍ. — Դատ մեծ իրաւունք ունի Արքայնութեան Հայրն երբ նորընտիր Քաղ. Չարլոյն 10 անդամաց հրաժարականն ի ձեռին ունի, զարու ըսելու թէ ևս միմտի մնացած եմ: Սոյս է թէ և որ Սահմանադրութիւնը տուած է արտօնութիւն Արքայնութեան Հոր գործելու ի հարկին ընդ իւր պատասխանատուութեամբ, սոյս կոյն պիտի է զխոնալ թէ պարզ ժամանակներու մէջ չենք սոյսիր. ստանի ժամանակի մէջ գրուած քաղիք մը շատ մեծ պատասխանատուութիւն կընայ բերել: Պիտի ալ չէ որ հրաժարեալ 10 անդամաց թախանձեմք հրաժարականին ետ ատենելու. այլ պիտի է ընտրելի անոնց տեղ ուրիշներ. բոց մինչև որ նորերն ընտրուին և գան, ինչ ընէ Արքայնութեան Հայրն. ըսուեցաւ որ կրօն. Չարլոյն հետ գործէ, բոց կրօն. Չարլոյն ալ մինչև մէկ տատիճան մը կըրնայ գործել քաղաքական խնդիրներու մէջ: Արքայնութեան Հայրը բան մը միայն կընայ ընել: Կանոնադրութիւնն արտօնութիւն կուտայ ի հարկին ատենապետաց զիւանը կոչել և խորհրդակցել. ուրեմն Արքայնութեան Հայրը թող շնորհ ընէ ատենապետաց զիւանին լեկեղեցական անգամներն ի բոց տանելով՝ միայն աշխարհական ատենապետները կոչել և խորհրդակցել ի հարկին մինչև որ Քաղ. Չարլոյն ունենայ:

ԱԼԻԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՃ. — Քաղաքական ժողով մը ունեցումք 14 անդամներէ, բոց զը-

րեթէ ամենն ալ հրաժարեցան. սասանկ փափակ ժամանակի մէջ Սրբազան Հայրը մինակ թողու երթալն ազգասիրութիւն չէ, թէ և ըսուեցաւ որ ձին հրաժարականը ստորդ հրաժարական չէ. ես կըսեմ թէ անոնք ալ հրաժարած են, իրենց հրաժարագրին եղանակն իրենց խղճին դրդումովն է, որպէս զի շրտուի թէ ազգին ծառայել կը փախչին :

Հիմա կը տեսնեմ որ զանազան ստաջար-կութիւններ կըլլան, ոմանք կըսեն թէ նորէն ընտրելեաց ցանկ գայ, ոմանք ալ թէ՛ Սրբազան Հայրն ստեղծագործաց զիւանը հրաւիրէ և անոր հետ գործէ : Պէտք է մտածել թէ՛ սրբան ատենէ ի վեր Քաղ. Ժողովոյ սրաշտոնը թափառ մնաց, և հիմա ալ սրբան ատեն թափառ սլտաի մնաց մինչև որ հրաժարելոց տեղ նորն ընտրուի : Սոյն տեսութեամբ ես կառաջարկեմ որ ըստ որում Սահմանադրական տարեգրութիւն կը մտանոտք արդէն, ըսենք Սրբազան Նախագահին՝ որ ինք ազգին ծառայելու յօժար և յարմար վեց եօթն անձ ընտրելով իւր շարքն ստնու և գործէ, և անոնց ցանկը բերելով Ազգային Ժողովիս վաւերացնել սոց :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Միթէ անո՞ր համար կը հրաժարիք՝ որ այդպիսի ստաջարկութիւն մ'ընէք : Մեր չենք կրնար ընդունիլ այդպիսի բան. Սրբազան Հայրն ինքնիրենն ալ կրնայ գործել, միշտ սրատախտանատու մնալով :

**ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ.** — Եստ ըսաւ, դուք և ձեր համակրողները կրնար յայտարարել թէ Սրբազան Հայրն ինքնին գործէ. բայց ես կը կրկնեմ թէ՛ ոչտար է արտօնութիւն ստաջարկական Նախագահին՝ որ իրեն գործակիցներ գտնէ և անոնցմով գործէ պրոչեալ ժամանակի մը համար :

**ԵԱԼՊԱՋ Ն. ԷՅ.** — Քաջ գիտենք որ երեսօտականաց պարտքն է կոպուի եղածին շտաբի դրոյշ գանտիլ խնդիրներն անձնականի չվերածելու համար, ես ալ այդ դաւաճութեամբ խօսեցայ և անձնականութիւններ երբէք չըջարեւ չուզեցի : Ելր ըսի թէ՛ սլտար է մեր ընտրած

պաշտօնեաները յարգենք և անոնց աջակցինք, որպէս զի իրենց ազգասիրական սրաշտոնն խոջուտան : Փորձով տեսանք որ նախորդ Քաղ. Ժողովոյ անդամներն՝ ջրանք ազգին ծառայելու անկարող մարդեր չէին, ավերողչառլէս հրաժարեցան. ինչո՞ւ. ժամն զի սչինչ բծախոզորութիւններ տեղի ունեցան իրենց դէմ : Իմ խօսքս նախորդ Քաղ. Ժողովոյ ստթիւ մասնատրութեանց չվերաբերիր. ես ընդհանուր կերպով մեր պաշտօնեաները չանարգելու, այլ յարգելու սրտառուորութիւն ունենալիս հասեցնել կուզեմ :

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ.** — Բայց 250 հազար դուրս պարտք թողող վարչութեան մը ինչ ընել պէտք է :

[Սրբախոյ]

Ատենապետ Էֆէնտի խնդրոյն վերջ տրուելու համար Փախտղեան Էֆէնտի սրահ մը ստաջ մատուցած գրաւոր ստաջարկը կարդաց, որ է .

« Ընդունիլ 10 հրաժարելոց հրաժարականը և հրախրել ստեղծագործաց զիւանն՝ որ մնացեալ չարտ անձանց հետ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր խորհրդակցելով, 20 անձանց նոր ցանկ մը բերին Ժողովիս :

« Միանգամայն կառաջարկեմ որ Պիւտճէի խնդիրը յաջարկ նախն Օրտարդն անցնի, ինչպէս որ քանի մը երեսօտականաց հետ արդէն ստաջարկութիւն մը ներկայացուցած եմ այսօր » :

[Ստոր.] **Ս. Պ. Պ. ՓԱՓԱՋԵԱՆ**

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Նախ՝ 10 հրաժարելոց հրաժարականն ընդունիլ պէ՞տք է թէ ոչ, քուէի պիտի դնեմ :

**ԵԱԼՊԱՋ Ն. ԷՅ.** — Քանի որ Սրբազան Նախագահն ի սրաշտոնէ յայտարարեց թէ մընացեալ էին 2ը բերանոցի հրաժարած են, անոնց տեղ ետրէն ընտրութիւն սլտաի ըլլա՞յ թէ ոչ, այս ալ սրոչելու է :

Ատենապետ Էֆէնտի քուէի դրաւ 10 հրաժարելոց հրաժարականն, որ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱԻ Ժողովն :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Այժմ կը մնան չորսը, որոնց համար կարծիք կայ թէ հրաժարեալ չեն համարուիր, ուստի և կառաջարկուի որ այս 4ին վրայ նոր ատան անձինք յաւելցնելու համար 20 անձանց զեղչելի ցանկ մը սրատրատուի : Այս կէտն ալ քուէի պիտի դնեմ :

**ՊԵՆԵԱՆ Թ. ԷՅ.** — Քանի որ Սրբազան Նախագահն՝ երկուքին համար բերանոցի հրաժարուտեած են ըսաւ, պէտք է որ անոնց հրաժարականը թէւեթեան սակ ընդունուի և այնպէս քուէի գրուի :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Ըսել կուզէք որ ենթադրելով թէ այն 2ը չեն հրաժարած. եթէ անոնց ալ հրաժարումն ստուգուի, ատանց Ժողովին բերելու անոնց տեղ ալ ընտրութիւն ըլլալու համար 20 անձանց տեղ 24 անձանց ցանկ մը բերուի :

(Այո՛, այո՛)

Եստ ըսաւ, ուրեմն Փախտղեան Էֆէնտիի ստաջարկութիւնն կը բարեփոխուի ստալէս և հըրախրել ստեղծագործաց զիւանն՝ որ մնացեալ 4 անձանց հետ ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր խորհրդակցելով, 20 անձանց նոր ցանկ մը բերեն Ժողովիս, և եթէ մնացելոց մէջէն ալ հրաժարող գտնուի, անոր կրկնապատիկ ընտրելին ալ նշանակելով ցանկին մէջ, այնպէս բերեն ցանկը :

Զոյս Ատենապետ Էֆէնտին քուէի դրաւ և Ժողովն միտնացնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ :

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ.** — Ուրեմն Ժողովն կորսչէ որ հրաժարեալ 10 անձինքն զոտ՝ եթէ մընացեալ էին 2ը ևս հրաժարին, այն ատեն 12 ըլլալով հրաժարելոց թիւը, 24 անձանց ցանկ պիտի սրատրատուի : Կը մնայ Փախտղեան Էֆէնտիի ստաջարկութեան Պիւտճէի խնդրոյն

վերաբերեալ մտը, որոյ համար արդէն 10 երեսօտականաց կողմէ ստորագրեալ զիր մը զիւանին մատուցուած է. այժմ անոր պիտի անցնինք :

Յ.

Քարտիտրիւն 10 երեսօտականաց

Յիշեալ ստաջարկութեան գիրը կարդացուեցաւ, որ է .

« Պ. նախն ստեղծագործեան մէջ հրատարակեալ տեսանք կեդրոնական անտուկի անցեալ տարուան ելից և մտից հաշուէցոյցը, և այս տարուան ենթադրական հաշուէկէլալը (պիտ. ճէ) :

« Կեդրոնական անտուկին ցվերջ սպարիլ պարտքն եղած է 182 հազար այսբան դրուս ստուգելով որ մայիս, յունիս և ներկայ յուլիս ամսոց մէջ սրատուց գումարն աւելցիւր և հետըզհետէ աւելնալու վրայ է, մինչև 250 հազար դրոյ, կենթադրուի ոյսօրուան սրատուց վիճակը ուստի կառաջարկենք՝

1. Ստիսուղականութիւն տալ Պիւտճէի խնդրոյն .
2. Յաջորդ նիստն 8 օրէն գումարելով նըկատողութեան ատնուլ այն խնդիրը և գէթ սրոչել այս տարուան ենթադրական Պիւտճէն, որպէս զի սրատուց վիճակն օր օրի աւելի ըլծանրանայ :

22 յուլիս 1877 [Ստորագր.]

- Ս. Պ. Պ. Փախտղեանց
- Ք. Ղազարսեան
- Ս. Միքայէլեան
- Ս. Պէշրեան
- Տ. Լեքսիքեան
- Ս. Ֆէլէկեան
- Օ. Եազճեան
- Յ. Խթիւնեան
- Պ. Յ. Թորգոմեան
- Ն. Գորաղալ

Ատենապետ Էֆէնտին կարդացուած ստա...

Ջարկութիւնը քուէի դրաւ, և Ժողովն ՐՆԴՈՒՆԵՑ Պիւտեճի խնդրոյն ստիպողականութիւնը, և ՈՐՈՇԵՑ յաջորդ նիստն 8 օրէն գումարել սոյն խնդրոյ համար:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Կը հարցնեմ զիւանին թէ՛ զինուորատուութեան մասին Սըրբազան Նախագահ Հօր ըրած յայտարարութիւնը տեղեկութիւնն էր միայն՝ թէ ոչ առաջարկութիւն էր Ժողովոյ հաճութիւնն ստանալու համար:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կը պատասխանեմ թէ ընդ տեղեկութիւնն էր և ոչ այլ ինչ:

**ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.** — Եստ աղէկ. եթէ Ժողովոյ հաճութիւնը խնդրելու համար էր, պիտի լռէի թէ Ժողովն կորող չէ ոչ հաճութիւն և ոչ տաճարութիւն յայտնել այդ խնդրոյն համար. ունեն որ ազատ է երթալ կամ չերթալ ի զինուորադրութիւն:

**ՕՐՍԿԱՐԳ**

Հրահանգ բարեկարգութեան ազգային վարժարանաց

Ատենապետ Էֆէնտին Օրակարգի խնդրոյն առթիւ 6 երեսօխոսանաց կողմէ ղեւանին մատուցեալ յետագայ առաջարկութեան գիրը ներկայացուց և կարդաց:

« Որովհետեւ առանց հիմնադիր մ'ունենալու անկարելի է Ղատարարութեան խնդիրը լուծել և օրինաւոր ուղղութիւն մը սալ անոր,

« Եւ որովհետեւ վարժարանաց բարեկարգութեան խնդիրն՝ որ Օրակարգ նշանակուած է՝ զատարարութիւնն ըսել չէ:

« Ուստի կառաջարկեմք ստորագրեալ երեսօխոսանքս՝ որ նախապէս զատարարութեան հիմնադրի խնդիրը լուծուի, որպէս զի կարենանք ստորագրեալ տե՛ս և յիշողներուն վրայ ալ

պէտք եղածը խորհիլս: 22 յունիս 1877 [Խորհարգ.]

- Ա. Կրճիկեան
- Գ. Ապտուլլահ
- Ե. Չայեան
- Կ. Ս. Իսթիւճեան
- Մ. Ղատարարեան
- Յ. Էստեան

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Ղատարարութեան խնդիրը յետաձգելու և անստանալու յետաձգելու համար ղեղեկցիկ միջոց մ'է այդ բոլոր ուշ մնացելու են. որովհետեւ արդէն բարեկարգութեան հրահանգ մը ըստ օրինի մեզի ներկայուած և առաջին ընթերցմամբ ընդունուելէ յետոյ Օրակարգն անցած է՝ զայն երկրորդ ընթերցմամբ յօդուած առ յօդուած քննելու համար. նախ այս քննութիւնը պիտի կատարենք, և եթէ այս մերժուի յօդուած առ յօդուած՝ յետոյ ուրիշ հրահանգ կամ հիմնադիր կրնան մեր վիճարանութեան հիմ լինիլ: Այժմ՝ այս ծրագիրն է մեր վիճարանութեան հիմը:

**ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.** — Կարդացուած առաջարկութեան մէջ խիստ կորեւոր կէտ մը կայ. կըսեն թէ զատարարութեան չէնքը կանգնելու համար առաջ հիմունքը որոշելու է. չէնէ առանց հիմը ձգելու չենքին ձեւերը տալուն կրնանք:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Բայց ո՞վ կըսէ թէ այդ հիմունքը կը սահման սոյն ծրագրին մէջ. յառաջ անցնինք յօդուած առ յօդուած քննելով պիտի ցուցնեմ թէ անարկած հիմունքնին կանատոր մէջ: Թէ՛ և հրահանգին հեղինակներէն մէկն եմ և ես, բայց գուցէ այնպիսի առաջարկութիւններ պիտի բերեմ, որ այս հրահանգին յօդուածները փոխել կամ նոր յօդուած աւելցընել հարկ ըլլայ. սակայն յօդուած առ յօդուած վիճարանելու տեսն կրնանք այդ առաջարկութիւնները ներկայացնել և փոխփոխութիւններն ընել:

**ԻՍԹԻՋԵԱՆ Կ. ԷՖ.** — Մեր կը կարծէինք թէ զատարարութեան հիմնադիր մը պիտի

ներկայանար մեզ, զի վարժարանաց բարեկարգութեան խնդիրը զատարարութիւնն ըսել չէ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Եւ այդ հիմնադիրը ձեռնհաս մարմնոյն, այն է Ուսումն. խորհրդոյ կողմէն պէտք է:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Եստ ցուցի բա՛ն, որ և տարիէ ի վեր ձեզ ներկայացած ծրագրին ինչ ըլլալը չէք գիտցեր և ծանօթ չի վեր գատարարութեան ղեւանի բերած և մեր Օրակարգն անցած անգլեկագիրը չէք կարդացեր կամ չէք սերտեր. և այսօր կըսէք թէ կենք կը կարծէինք որ սանկ կամ նանկ հիմնադիր մը պիտի ներկայանար և տակաւին չէք գիտեր թէ այդ ծրագիրն ալ ձեռնհաս մարմնոյն կողմէն ներկայացած է: Բայց թէ որ ձեր կուսուցութեան ձեռնհաս մարմնէն չէ ներկայացած, և այդ պատճառաւ կը չփոխիք, ժամանակ կայ տակաւին մինչև երկրորդ ընթերցման աւարտը ուզած ծրագրինից կրնաք ներկայացնել որ ըստ օրինի նախաքննութեան երթալէ ետե՛ս Ժողովին կըրնոյ ներկայանալ. եթէ դուք ջանք ունիք, կըրնաք հասնիլ մեր ետե՛ն. Ժողովն այժմ ազգային գատարարութեան խնդրոյն վրայ վիճարանելու համար հիմ մ'ունի իր ձեռքը, որ ըստ օրինի ներկայացած է, և անոր առաջին ընթերցումն ալ աւարտած է: Այժմ՝ վարժարանաց բարեկարգութեան հրահանգին երկրորդ ընթերցման այն է յօդուած առ յօդուած քննութեանը պիտի սկսինք. և յօդուած առ յօդուած պիտի ընդունինք կամ մերժենք և կամ բարեփոխենք:

**ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Մէկ կողմէ թող այդ հրահանգը կարդացուի և քննութեան տեսնուի, միւս կողմէ թող Ուսումն. խորհարգն ալ հիմնադիր մը բերէ:

Ատենապետ Էֆէնտին հրատարակուած վրայ Փոփոզեան Ս. Էֆէնտի բե՛նն ելաւ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Վարժարանաց բարեկարգութեան հրահանգին Ս. յօդուածը կըսէ. « Ազգային վարժարաններն երկու տեսակ են. 1. Նախակրթարան կամ նախնական վարժարան:

2. Ուսումնարան կամ երկրորդական վարժարան:

Նախակրթարանի մասն է Ընտելարան՝ որ Թաղից ալ կըսուի:

Բանի որ Ընտելարանն ալ տեսակ մը վարժարան է, զորս ունի ազգը մտնուածով թէ թաղերու մէջ շատ տեղ տաւածինն ունի, կառաջարկեմ որ այս յօդուածը բարեփոխի ստակս:

Ազգային վարժարաններն երեք տեսակ են.

1. Ընտելարան կամ Թաղից.
2. Նախակրթարան կամ նախնական վարժարան.
3. Ուսումնարան կամ երկրորդական վարժարան:

**ԱՊՏՈՒՂԱՀ Գ. ԷՖ.** — Թէ՛ և Օրակարգին մէջ Հրահանգ մը կայ որ ազգային վարժարանաց բարեկարգութեան անունը կը կրէ, բայց տարակոյս չկայ թէ քան խնդիրն Ազգային գատարարութեան վրայ է: Այնպիսի միջոցներ և սկզբունքներ կան՝ որք չեն մտածուած և որք զատարարութեան խնդրոյն հիմանցը կը վերաբերին: Ուրեմն պէտք է նախ այդ հիմունքը ստորոշուի, որպէս զի կարելի ըլլայ կանխուոր և կատարեալ բարեկարգութեան հրահանգ ունենալ:

**ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.** — Եստ աղէկ. դուք պատրաստեցէք այն միջոցներն և սկզբունքներն որ պէտք է կըսէք և հաղորդեցէք Ժողովին. ինչո՞ւ մինչև հիմա յապաղեցիք, և երբ այսօր հրահանգին յօդուածոց քննութեանը կսկսուի, այդ խօսքերը կընէք:

**ԱՊՏՈՒՂԱՀ Գ. ԷՖ.** — Ղատարարութեան խնդիրը Ժողովին Օրակարգն անցնելէ ի վեր, իբրև Ուսումն. խորհրդոյ անդամ թէ՛ ես և թէ՛ ընկերներէս Չայեան Էֆէնտի խօսք ուղած ենք մեր մտածած և ի գիր տաւած սղըբունքներն ու միջոցները Ժողովին հաղորդելու, բայց միշտ ժամանակը չէ ներած որ խօսինք: Կը ցուխմ, որ ընկերս Չայեան Էֆէնտի՛ այս պահուս հոս ներկայ չէ. բայց եթէ Ժողովը կը ներկ, պտորրատ եմ խօսիլ:

ՍՐԲԱՉԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Եստ աղէկ, խօսեցեր :

ԱՊՏՈՒԼԻԱՀ Գ. ԷՖ. — Տեսաք չկայ խնդիր մը որ ազգին էութեանը և սրայծառութեանը այնչափ ուղղակի վերաբերի որչափ դաստիարակութեան և կրթութեան կենտարան խնդիրը : Ազգը ժամանակէ մը 'ի վեր խեղամուտ եղած է այս մեծ ճշմարտութեան և այն համոզման սրղխերն են կրթութեան վերաբերեալ բազմիցս հրատարակուած յոշուածները, եղած վիճարանութիւնները, յորինուած ծրագիրներն, ևն ևն : Բայց մինչև ցարգ զոչոցած սրղխերը կարծես ժողովրդեան փարագանացը չարտաստանէր, զի միշտ և ամէն տեղ կը դանդափնա թէ դաստիարակութեան և կրթութեան խնդիրն ըստ կարելոյն նկատողութեան սանուած չէ, բաւական վարժարան չկայ, կամ զըտնուածներն բարեկարգ վիճակի մէջ չեն, բնակր դասատուաց թիւը բաւական չէ, դաստիարակութեան համար յատուկ գումար մը չկայ, ևն : Այս է ահա ժողովրդեան ամենօրեայ գանգաւոր որ անհամբերութեամբ դարման կ'սարսռէ մեզմէ իրաց վիճակին, և մեր վրայ սրտաք կը գնէ այս խնդիրը իր սրտոյն յառաջադիմութեան ամենէն կարևոր և իբր ամենէն աւելի տիրազրական խնդիր նկատել, վիճել և սկսք եղած տնօրինութիւնները վտթայունել :

Ազգիս այս օրինաւոր և զողելի շարժման հետ կ'ընկերակցին նաև ուրիշ հարկադրիչ սրտազայներ՝ որք խնդրոյս ստիպողականութիւնը կը սաստկացունեն, ինչպիսի են ազգիս նիթա կան վիճակին յետին թշուառութիւնը, որ քան զոր սրանդիսութեան աճիլը, ժամանակակից քաղաքական դէպքերը՝ որոց արդեանցը վրայ յանդգնութիւն է այժմէն վճուել, և սատանօր խօսիլն անպատշաճ : Աւելցուցէք սասնց վրայ խել մը ուրիշ բարոյական սրկասութիւններ՝ որոնք ըստ մեծի մասին մեր քաղաքական կենաց սրայմաններուն հետեանքը կրնան նկատուիլ, և որք՝ աւսղ. կը քանդեն ազգութիւնը : Այս ամեն նկատուաներն կը հարկադրեն զվեզ, կըրեմ, ժամ առաջ ձեռք առնուլ այն մահաւ և կենաց խընդիլը՝ որ դաստիարակութիւն կը կոչուի, և ու

րուն մէջ կը նշմարէ ազգը իւր բարեկեցութիւնը, իւր սրտախը, իւր ազգութիւնը և իւր սրագային բարեբաւութիւնը :

Խիտ համապատիւ տեսներ ուրեմն թէ ազգային կրթութեան արդի վիճակն ի՞նչ է, արդեօք ազգին գանգատանաց արժանի ըլլալու չափ ետ մնացո՞ծ է : Գտնուէք գտնելու այն զլիսուսը խոչընդոտները՝ որ սրղելը կը կանգնին կրթութեան և դաստիարակութեան ընդ վոյթ զարգացման, և որ մեր դժգոհութեան տեղի կուտան : Տեսներ դարձեալ թէ՛ որոնք են հաւանելի միջոցները, դարմաններն և բարեփոխումներն առ 'ի բարեարեւ զազգային դաստիարակութիւնն :

Ստիպե՛ ի՞նչպէս կարելի է մեզ ճշգրտ բնութիւն մը ընել քանի որ վիճակագրութիւն մը չունինք, որ սուտնորդէ մեզ 'ի ստուգութիւն ճշմարտութեան : Արդարեւ ո՞վ կրնայ ճշգրտ գրուցել ազգը քանի վարժարան ունի և անոց իրաքանչիւրին մէջ ի՞նչ ուսումներ կուսնողեն և կամ գտնուած վարժարանները նիթաթաղէ և բարոյատէս ի՞նչ վիճակի մէջ են, բանի դասատու քանի աշակերտ քանի հոգի կարող զրել ստիպող կայ, ևն ևն : Ոչ որ կարծեմ այս մասին կատարեալ տեղեկութիւն մը կրնայ տալ, զի ինչպէս ըսի, չկայ վիճակագրութիւն ինչ որ ըսենք անստոյգ և երեւակոյցեալ է, ո՞ր գիտէ, \*եթէ վիճակագրութիւն մը ըլլայ մեր գանգաւոր թերեւ չափաւորի, կամ ընդ հակառակն աւելի սաստկանայ : Ուրեմն առ 'ի չգոյն վիճակագրութեան ըսկ ազգին արտաքին երեւոյթներէն սխտի կարենամք գաղափար մը ըստանալ ազգային կրթութեան սաստիճանին վրայօք, և այն ալ շատ հարեանցի կերպիւ, ինչ սխտի են բուռն եռանդն ուսման, ուսումնական ընկերութեանց հաստատութիւններ, որոց թիւը բարերադարար երթալով կ'աճի ընդդէմ ժամանակիս անձկութեան, կրագրաց հետզհետէ ծրնունդ տանուըն, անուս և գաւառացի սրանդըլից համար կիրակնօրեայ վարժարանաց հաստատութիւնը թէ 'ի Պօլիս և թէ 'ի գաւառս, գիտութեանց, մատենագրութեան, լեզուագիտութեան և ազատ արուեստից զարգացումը, և

հաւաստի այս վիտոյթի խննդէն միայն կրնամք փոքր 'ի շատէ խմանալ որ ազգը ըստ ինքեան, և հրաշխիք իմն կը յառաջադիմէ : Ստիպե՛ն և թէ ժամանակիս և արդի ընկերական սխտայից հետ բողոքատութիւն մը ընելու ըլլանք նշմարած յառաջադիմութիւննիս անչուշտ անբուսական սխտի գտնեմք այդ սկստերն յողեցունելու որ աւելի բարձր են, աւելի սոսնջուողական քան տեսնուած յառաջադիմութեան արդիւնքը : Ասկի քան տարի սուտ ազգային կրթական յառաջադիմութիւնը անտարակոյս սցսորուընէ նուազ էր, բայց մեր ընկերական սկտերուհն համաձայն ըլլալուն համոզիտ կը վայելէ ժողովուրդոյսօք ազգը թէ՛ սկտ աւելի յառաջադիմ' բողոքատմամբ՝ ստիպե՛ն անհամոզիտ է, ըսել է թէ եղած յառաջադիմութիւնը մեր ընկերական սխտայից և մեր դրոցմանց դեռ չկրնար համապատասխանել : Եւ ահա այս մեծ սրկասին հետեւանին է որ ազգը կը գտնգատի միշտ թէ չկայ բուսական վարժարան, չկայ բնակր դասատու, թէ ուսումնական խորհուրդը ըստ կարելոյն ուշադրութիւն չընէր վարժարանաց բարեկարգութեան, ևն ևն : Կրուտցի է թէ սկտ ժողովուրդեան այս գտնգատը, բայց ազգային կրթական յառաջադիմութեան կազ երթալուն բուն խոստճանները ըստ չնշմարեալ' մերթ վարժութիւնը՝ մերթ ուսումնական խորհուրդը կը մեզսօրէ, իբր թէ անտարբեր ըլլան այս կենսական խնդրոյն :

Ազգին Ուսումնական յառաջադիմութեան կազ երթալուն ըստ խ երեք զլիսուսը սրատճատ կոյ :

Ա. Ազգային վարժարանաց հոգարարձութեանց ձեռօք մատակարարուելուն յոտի դրութիւնը :

Բ. Ուսումնական Խորհրդոյն անձուկ սոհմանի մէջ գործելը :

Գ. Գաստիարակութեան համար յատուկ գումար մը մինչև ցարգ չորոչուիլը :

Ահա տակ ազգային դաստիարակութեան ըստիս զլիսուսը խոչընդոտները՝ որ տեղի կուտան այնչափ գանգատանաց և սխտի տան միշտ մինչև

չև որ սկսք եղած դարմաններն ու բարեբաւութեան 'ի գործ չդնենք :

Յիրտի ազգային դաստիարակութիւնը բողոքատճ վիճակի մէջ դնելու համար կան դեռ արիշ սրայմաններ մին քան զվիսուն կարևոր, բայց ես միայն այս երեք տառադարակութիւնները կը ներկայացունեմ՝ իբր հիմնական սրայման ըլլալիք ձեռնարակութեանց և կորողորթեանց :

Հագարարձութեան խնդրոյն վրայօք համարուս հաստատելու համար կրուեմ 'նախ թէ՛ ընդհանրապէս սրաչանի մը անիլ երի գործադրութիւնը երկու սրայման կը սրահանջէ, երկու քնալ անբաժան կերպիւ իրարու հետ միացեալ, այն է շուն և սրատաստատարիւն : Արչափ այս երկու սրայմանները զօրուսը ըլլան՝ այնչափ ալ վտաճութիւննիս մեծ է այդ սրաչանի իտակատար գործադրութեանը վրայ, և կամ ասօք հակասուկ որչափ տկար և թեթեւ ըլլան ստներ՝ այնչափ ալ սրաչանի մը գործադրութիւնը կը վտանգի :

Արդ, մեր հոգարարձութիւնները՝ որ ազգային վարժարաններն հողալու և խնամելու ծանր սրաչանը ունին, ոչ այնչափ մեծ շահ մը ունին և հետեարար ոչ ալ մեծ սրատաստատարութիւն, քան զի ունեցած սրաչանիին անձնութեան է :

Անձնութեան արդարեւ շատ անգամ մեծ և վսեմ գործերու կը մղէ վմարդ, բայց ըստ ինքեան ինքնամին շարժում մը ըլլալով զրան կորէք ձեռում և սահման չուղէր, և ստոր տեղութիւնը սրարազայներէն կոխուան ունենալով՝ ոչ որ կրնայ ճշգրտել :

Այսպէս մեր հոգարարձուաց անձնութեան տեղութիւնը իրենց հոյրենատարական ողուցն ստատիճանէն, կամ կրթութեան համար ունեցած սկէն և կամ ուրիշ անձնական նկատումներէն կոխուան ունենալով, երբ այս սրատճատները դադրին կամ փոխփոխութիւն մը կրեն՝ անձնութեան զգացումն ալ կը դադրի կամ փոխփոխութիւն կը կրէ :

Այս զրութեան վնաստար հետեամքները բողոքով են, ու կրնայինք այս մասին բուսական մեր խօսքն ընդլայնել, բայց մանրամասն

նույն ժամանակ մեծագույն ունեւորաց համարութիւնը չարաչար չը գործածելու համար, խօսքս կը համարուեմ յաւելլով միայն թէ այս յոսի դրութենէն յառաջ եկած խել մը շնչին և անձնական խնդիրներու պատճառաւ նախորդ և արդի Ռուսաստանի խորհրդաց և մասամբ մը վարչութեան անդին ժամերն շատ անդամ յամպէտս վաստակած են: Ռուսաստանի խորհրդաց արձանագրութիւններն այս մասին կրնային մեզ ընդարձակ տեղեկութիւններ տալ:

Կրտս է թէ երևոտական տեսութեամբ այս դրութիւնը առաւելութիւն մը ունի, բայց ինչ օգուտ երբ շուրջ մնասէն շատ ստորին է: Այդպէս անորոշութեան առջև ըստ կեանքը ազգային դատարարութեան ներառմամբ անստորելութիւն համարելու համար, կատաղութեամբ որ առանց ժամանակ կորուստներ, վերցունենք վարժարանաց վրայն այդ հոկող մարմինները որ հագարարձութիւն կը կոչեն և որ ինչպէս փորձով տեսնուած է մերթ վարժարանաց պաշտօնէնց հետ և մերթ խաղտական խորհրդաց հետ դանտարան տեսակ վեճեր և հակառակութիւններ աճեցնողով աւելի շփոթութիւն կը սրտածառեն դպրոցներու յառաջադիմութեան և բարեկարգութեան քան դիւրութիւն. և այս պիտով Ռուսաստանի խորհրդաց ժամերը կը դըրուեն 'ի դուր: Փոխենք կըսեն այս դրութիւնը և դեներ մեր վարժարանաց վրայ տեսուցեր, և դանտեր միայն որստատիանտու ճանչնանք ուսմանց ծրագրին անխելի գործադրութեանը, վարժարանին բարեկարգութեան, ներքին մասնագրարութեան և անանց պաշտօնին կարևորութեան համեմատ վարձք մը սանք ըսելով այսուհետև ձեր պաշտօնին դար էր պատասխանատու Ռուսաստանի խորհրդաց սխեմայ: Ո՛չ արտէն յառաջադիմ վարչակցաց մէջ այս դրութիւնն է ընդունուած' որոց շահաւէտ արդիւնքը ոչ որ կրնայ ժխտել. և քանի որ այս պայտէս է, ինչպէ վարձիկն ուրեմն այս մասին եւրստարանաց ընթացքին հետեիլ:

Արդէն կան Պոլսո քանի մը ազգային վարժարաններ որ մասնաւոր հագարարձութեան խորհրդակցի երկարութեն, և յետոյ կ'ենթարկէ

դիմական վիճակը ազգայնաց շատերուն զարմացման և շորհակալութեան արժանացած է:

Կոչեմ ըսել որ ամէն տեղ, մէկ օրուան մէջ Հագարարձութիւնները գաղթին իրենց սրտանէն. նախ Պոլսո վարժարանաց վրայ փորձեմք այս նոր անօրինութիւնը և եթէ գոհ ըլլանք երաժարելուն (որոց վրայ տարակոյս չունիմ), այն ժամանակ ամէն տեղի համար վաւերացունենք այս դրութիւնը, որոց մասն և գործնական կէտերը պէտք է Ռուսաստանի խորհրդը կանխաւ խնայատարէ:

Հագարարձութեան խնդրոյն վրայօր այսչափ ըստ բաւական համարելով, կ'անցնիմ երկարօր խնդրոյն, որ է Ռուսաստանի խորհրդաց ազատութեան սահմանը անձուկ ըլլալը:

Ազգիս ընդհանուր գործոց անօրինութիւնը, ինչպէս ամենու յայտնի է, երէք գլխաւոր ճիւղի կը բաժնուի. Արձանական, Վարչարական և Ռուսաստանի: Երբեք ալ իրարմէ ոչ նուազ կորեք, զի այս երեք ճիւղերու վրայ են հիմնուած մեր ազգութեան պաշտօնութիւնը և պայծառութիւնը, այսինքն Արձանականը ըստ կրօնականին, Վարչարականը ըստ բաղարարականին ազգիս ներկային պաշտօնութեանը կը հսկին, իսկ Ռուսաստանի մը՝ բարոյապէս և նիւթապէս աղբիւն վիճակը բարեբերով անոր ազգայն կը պտտրաստէ. ըստ այսմ երեքն ալ հուստարաս պէս մեզի համար նոյն յարգը և նոյն կարևորութիւնը ունին, այնպէս որ ասանցմէ մին չը կրնար միւսայն վրայ ազդեցութիւն բանեցունել առանց ազգին ընդհանուր օգտին միտս բերելու:

Սակայն հակառակ այս ճշմարտութեան՝ մեր մէջ Ռուսաստանի ճիւղը Վարչարականին արտաճառութեանը ենթարկուած ըլլալով, ոչ միայն դատարարական յարգին դէմ անիրաւութիւն մը երաժ կը տեսնուի, այլ նաև այս դրութեան պատճառաւ մեծագույն կը տուժէ ազգը: զաստիարակութեան վերաբերեալ որ և է որոշմանց և ստիպողական անօրինութեանց դանդաղ դորձադրութեան մասին:

Ռուսաստանի խորհրդը ըսենք ըստ դատարար մը կը յղանայ, որոց վրայ կը վիճէ կը խորհրդակցի երկարութեն, և յետոյ կ'ենթարկէ

զայն Վարչութեան կամ Վարչարական ժողովոց վաւերացման, բայց չգիտէր նա թէ ներկայացուցած առաջարկութիւնը եր'ք ուղեօք կարգը գարով հասանութիւն կամ վաւերացումն պիտի ստանայ Վարչարական ժողովոց կողմանէ՝ որոց առջև հետզհետէ կը դիմելու ու կը դիմելին գործերը: Կանցնի ժամանակը, ազգային դատարարական վերաբերեալ ստիպողական գործերն առ կախ կը մնան. խորհրդը կը յաստատի, ազգը արդիւնք կ'ստատէ, յուսացածին չափ արդիւնք չտեսնէր, կը դանդաղի: Բայց պէտք է նա դանդաղի Ռուսաստանի խորհրդոց կամ Վարչութեան դէմ, իբր թէ անհոգ և անտարբեր ըլլան ստիպողական պայտէսը և գործադրութեան. պէտք է քանդատի նա դրութեան դէմ՝ զի դրութիւնն է մեղադրելի:

Ռուսաստանի խորհրդը մը ազգային դատարարական վրայ հոկելու և դանի ամէն կերպով վարգաճանեալու որոշումն աճեցնող չը կրնար իւր խիղճը հանդարտեցունել այսպիսի անպատեհութեան առջև, մասնաւոր երբ մէկ կողմանէ ժողովոցին իրաւացի դանդաղները կը ըսէ ու միւս կողմանէ ազգին աստիճան աստիճան կը նշմարէ, ծարաւ կրթութեան և դատարարականութեան: Անորոշուած ստոր գարման պէտք է և դարմանը ուրիշ կերպ չըլլար, բայց եթէ Ռուսաստանի խորհրդոց այնչափ ազատութիւն տալ արչափ իւր պաշտօնին կարևորութիւնը և յարգը կը սրտանշէ: Ըստ այսմ, կատաղութեամբ պատիւանելի ժողովոց՝ որ Ռուսաստանի խորհրդը դանէ միայն Պոլսո Վարչարական ժիւղով պէս ուղղակի Ազգ. Կրթականականական ժողովոց կողմանէ ընտրուի, իւր պաշտօնաւորութեանց սահմանը անկէ ընդունի, և անոր միայն պատասխանատու և համարատու ըլլայ, և այս մի միայն 'ի դիմութիւն և 'ի բարեկարգութիւն գործոց և հետաւարար յոգուտ ազգային դատարարական: Այսպիտով նաև, թէ քաղաքական ժողովոց վրայն բաւական ծանր աշխատութեան բեւ մը բարձուած կըլլայ, և թէ Ռուսաստանի խորհրդը՝ իրեն տրուած ազատութեան շորհիւ աւելի մեծ արդիւնք մը տր

տարբերութիւն յօժարութիւն և թէ դիւրութիւն կ'ունենայ:

Ազգային կրթական յառաջադիմութեան գլխաւորագէտ արդեօք եզրու պատճառներէն մին ալ է ըսինք Ռուսաստանի Վարչարական համար յաստի գուճար մը մինչև ցարդ սահմանուած չըլլալը:

Այսուհետև խնդիր մը որ մեր դրեթիւ ամեն նորեայ խօսակցութեան նիւթ եղած և իրեն օրինակութեամբը մեր ամենուս համարուալը դըրուած է, թէ ասանց դրամայ շեմք կարող ազգային դատարարականութիւնը ծաղկեցունել:

Այս խնդիրս լուծելու համար երկու միջոց կը տեսնեմ, առաջինը՝ որ արդէն ամենուս ծախօթ է, Կեդրոնական մետուղը դատարարականութեան համար յատուկ գումար մը պէտք է ստանանէ տարեկան Պիտակին մէջ: Արդիւրդը՝ կատաղութեամբ իբր դիւրաւ գործադրելի միջոց, որ Վատարարարանին մէջ մնայուն ետեքի մետուղ մը հաստատուի 'ի պէտս քաղաքականութեան և գարգայման ազգային դատարարական:

Այս մետուղիս բարգաւաճ վիճակն աստիճան վերու համար տեղացի և օտարութեան հայոց հարկէ դիմել չըջարկուանաւ, առանձին նախակաւ, հաստարարականութեամբ և դեռ ուրիշ միջոցներով. և անանց հայրենասիրական աշակցութիւնը խնդրել այսպիսի օգտուէտ հաստատութեան նախադիմ յայտնելով: Միանգամայն ծանուցանել ամեն տեղի Հայոց որ այս մնայուն մետուղը միշտ պատրաստ է երախտագրութեամբ ընդունիլ կոտիլի ձեւով որոշած դրամական նուէր մը՝ արչափ և իյէ անոր քանակութիւնը:

Հարկ չեմ տեսնել յիշեցունել նաև թէ այս հաստատութեան ձեւօր՝ մեծ օգուտ մ'ալ պիտի ըսնիք, այն է ցրուեալ հայերը կերպով մը իրարու հետ յարաբերութեան մանեղու դիմելն միջոցը, որում ամենքինս ալ պէտք է վրայ յեմք թէ Հայ ազգը մեծատէս կարտ է:

Վերջապէս բուն խնդրոցն դառնալով դրամայ մասին այս կերպ նոր հարց մը մտածելու և գործադրելու ըլլանք, նախ Կեդր. Մետուղին վրայ այնչափ ծանրացած շեմք ըլլար, որ հա

զիւ Պատրիարքարանի պիտայից կարող է բանել, երկրորդ՝ դատարանախօսութեան համար երամասի նոր սղորիւր մ'ալ ստեղծած կըլլանք, որ ինչ յորդարար ալ չհասնէ գոնէ ամեն կալմանէ, կաթիլ աւ կաթիլ բոց միշտ վազելով ժամանակ մը ետեւ կրնայ մեր յուսացածէն աւելի արդիւնք մը տալ:

Գատարակութեան համար պէտք եղած ծախքերն երկու տեսակ են. մին սովորական, միւսն սրատահան. սովորականը պէտք է վարձար սրտածնկից համար, ինչոյիսի են բնէն ինչք վարձարանաց, որոց անհրաժեշտ կարեւորութիւնը 'ի բարեկայ յետէ՛ ճանչում է թէ տեղական և գաւառական վարձարանաց համար, Գործոն անգամը հայկարանական ձեւորմանն, որոց հաստատութիւնը մտաւրտ կ'երեւի: Այս ծախքերը կրնան Կեդրոնական սնտուկին կողմանէ հոգացուիլ: Երկրորդը սոյնինքն սրատահան կան ըսածս, որ և օգտակար և արդիւնասարգրութեանց հրատարակութեանը և մասննագրաց կամ արժանասար դատատուաց քաջալերութեանը համար, և կամ հանձնարար տղայ մը 'իւր կրթութիւնը աւարտելու նպատակաւ: Յարտայից համարարանները խրկելու և թէ ասոր նման պիտանի և քաջալերական վարձանի մը համար:

Այս ծախքերն ալ կրնան հոգացուիլ մասշտան նուէրի Սնտուկի ձեռքը:

Սնտարակոյս եւ որ այս Սնտուկս ազգիւ շատ օգտակար պիտի ըլլայ, զի անոր վրայ եղած խորին վստահութեան շնորհիւր շատով պիտի բարգաւաճի: Այս վստահութիւնը շատ բնական է ժողովրդեան համար, զի նոյն խնդիրն է այդ Սնտուկին հաստատութեանը սրտածնայիս ձեւարկողը, ազգն է անոր հակադէմ սրտածնային և անոր բարիքը վայելողն:

Ահա ստանք են Ազգային դատարանութիւնը բարեկարգ և հաստատուն վիճակի մէջ դնելու օգտակար և անհրաժեշտ դատած սասնարկութիւններն և իմ գրչն խորհրդակցութիւններն, զոր կը ներկայացուցեմ Պատրիարքի ժողովցի հաստատութեանը՝ դարս թողով 'իսկ մը կար'ար խորհրդակց' սրոց բաժանն բառ մեծի

մասին պիտի զխրանայ յետ դործադրութեան վերայիշեալ երկու առաջարկութեանց:

Այժմ կ'անցնիմ ազգային դատարանութեան վերաբերեալ կարեւոր կէտի մը վրայ հաստատ տեսութեան մը՝ որ ազգիւ կրթական յատկապիսնութեան անհրաժեշտ սրտածնն է:

Գատարակութեան և կրթութեան նպատակը մարդուս կատարելութիւնն է. լոկ մտաց զարգացումը կամ լոկ սրտի զարգացումը կատարելութիւնն է: Դա մարդուս կատարելութիւնը այս երկու սրտածննդերուն դուգակցութեանը մէջ է: Այդ մենք, մինչև ցարդ ինչ չեմ սրտայի կրթութեան մասին մասնագորարար մտաց զարգացումը աւարկաց եւր ըրած մեր խորհրդակցութեանց, ու սրտը նուազ աշտարակեան առած, սրտը կըսեմ որ ազգութեան հաշտ բարեկամն է: Այտք չէ մտնալ թէ մարդուս կրթելն ու ակտերը մտաց զարգացման մէջ աւելի՞նտուղ կ'անուան: Այս մասին Յարտայից մէջ վերջին ժամանակներս վիճակագրական քննութիւն մը եղած է, արդիւնքը որոշ կերպով կը մեկնէ: Լոկ մտաց վիճակութեան աղետալի հետեւանքը. այնպիս որ այս վիճակագրութիւնը ընող անձինք՝ մտաւրտ ազգային մը մէջ մեծ վրտանդ կը նշմարեն Յարտայից ընկերական վիճակը վեր 'ի վայր յաղելու շախ սպանադից:

Այդ մենք որ գրուելիք կրթութեան մէջ կրկին նպատակ միանգամայն կողմեր ձեռք բերել, այսինքն նախ բարեկիրթ մարդ, երկրորդ բարեկիրթ և ազգասէր Հայ, ս'ըջտի ևս առաւել մտաղիւր ըլլալու եւր սիրան ու միտքը միանգամայն մշակել, ստանց սրոց ճշմարիտ յատկապիսնութեան վտարարող ազգ մը չկրնար հաստատուն քոյլ աւանդ քաղարարկութեան շաղիմն մէջ:

Եթէ ազգային կրթութեան մէջ այս կենտական կէտը մեր աշտարակեան վրիպի՝ մեր թախած ճիւղն ալ 'իւր նպատակին կը շեղի, զի մեր նպատակը առանձին առանձին ուսեալ և անկախ անհատներ հասցունել և յետոյ դանդեր ընդհանուր մարդկութեան զանգաւածոյն մէջ խառնել չէ, այլ ազգութիւնը սրտածնայունել բարեկիրթ և ուսեալ հոյերով, սոյա թէ ոչ՝

ինչ հարկ կոց ազգային դպրոցներ կատարանելու քանի որ օտարաց դպրոցները սրատատ ևն մեր տղարներն ընդունելուց. ինչ հարկ կոց առանձին առանձին ժողովներ, մասնաժողովներ վիճարանութիւններ ընել, ծրագրիւներ պատրասել և ծանր աշխատութեան մեր միտքը յոգնեցունել, բանի որ Հայութիւնը պիտի չզարգանայ:

Ըստ որում Հայ, մեր բոլոր ջանքը մի և ինչ նպատակի սկստք է զիմէ. այն է ազգին յատկապիսնութեանը և սրտածնութեանը: Այս վտարելի արդիւնքը ձեռք բերելու համար մի միայն միջոցն է ազգի մը սարդղութիւնը ներդաշնակութեան մէջ սրտոզ սկզբունքներն ընդհանրացունել. այս սկզբունքները Ազգային քաղաքականի մէջ կը բախանալին. Ազգային բարոյական ըսելով կ'իմանամ գլխաւորապէս սէրը որ արդէն մարդկային ընկերութեան հիմն ըլլալով միտքիւն անսողջութիւն զորութիւն և յատկապիսնութիւն կը ծնանի. ուստի հոն փնտտելու եւր ազգութիւնը, հոն փնտտելու եւր Հայութիւնը:

Ահա ազգի մը անհատից համար այն զորութիւնը, որ մարմնաց մը բազադրութեան անթիւ փորրիկ մտուծքը յիւրեարս կցելով կ'ամրացունէ զայն, կ'ամրողւացունէ և ձեւ կուտայ սմոր. հանէ անկէ այդ զորութիւնը, մարմինը խկոյն կը քայքայի կը իշրի, սոյնինքն ամրողութիւնը կը կորսնցունէ. Ազգութիւնն ալ բազմութիւն անհատներէ բաղկացեալ մարմին մըն է որ թէպէտ բարոյական՝ բոց բնութեան մի և նոյն օրինոց ենթակոյ. վերցուր սէրը՝ ազգութիւնը կը քայքայի, սոյնինքն լոկ անհատներ կը մասն իրարմէ անկախ:

Կրօնքը ստղելու համար քրիստոնէական մը կոց որ անհրաժեշտ պէտք է ամեն քրիստոնէի համար, քրիստոնէական մ'ալ ըլլալու է ազգային բարոյականի համար. հոն սերտելու են մեր տղարք բոլոր իրենց սրտերերն առ Հայրենիս, առ ազգութիւն և առ հաստատու եղարքս, հոն ուսանելու են թէ ամեն Հայ իրարու յատուկ համբարշխութեան կատարել կատարած են, թէ իրենց եղարքը օտարէն աւելի սիրել սրտատ.

կան է, անոր համար զո՛ւ ընել և օգնութեան ձեռք կարկտել գիտնալու է, թէ ազգային սրտիւն ամեն սրտազայի մէջ մահու շախ սրտաբանելու է, թէ այս հանգամանքները չունեցող ազգը տակաւ առ տակաւ կորստեան ենթակոց է: Ահա այս է ազգային բարոյական ըսածս, զոր իրականացունելու համար մտաց հետ միանգամայն սիրտու սղ մշակելու եւր: Այս սկզբունքները քարոզուելու են մեր ազգային վարձարանաց մէջ ուր մինչև ցարդ լոկ մտաց զարգացումն է գլխաւոր գիտում զի պէտք չէ մտնալ որ տաղիմն տրուած սկզբունքներն են, որ հաստատուն տրմատ կը ձգեն սրտատ նեկութեան սրտին մէջ:

Երբ ազգային դատարանութիւնը այս սկզբութեան մէջ դնենք՝ այն առեն մեր ազգային կրթական ժողովները, յորինուած ծրագրիւնը, եղած կամ ըլլողիք բարեփոխումներն իրոք նշանակութիւն մը, որոշ նպատակ մը կ'ունենան, և այն առեն մեր թախած ճիւղերն ալ արժանաւորապէս կը պատկուին:

**ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ.** — Կը շնորհաւորեմ առեկարան ԼՖէնտիին սերժանտութիւնը:

**ԱՏՆԱՊԵՏ ԷՃ.** — Նոյնպիսի զիմաց Պիւսանին կը շնորհաւորեմ:

**ՓԱՓԱՋԱՆ Ս. ԷՃ.** — Շատ ազիկ եզու որ Ապտուլահ ԼՖէնտի խօսեցաւ. որով գործնականապէս պիտի կրնամ ցուցնել թէ սոյն միջոցներն և սկզբունքներն որք դատարանութեան խնդրոյս հիմանցը կը վերաբերին, և վիճարանութեան տակ զանազա ծրագրին մէջ կը պակիին ըսու, կան ամէնքն ալ սոյն ծրագրին մէջ:

Նախ սկստք է ըսեմ թէ Ապտուլահ է. Ֆէնտի իր ընդարձակ տեսնարանութեանը մէջ ծրագրին Ա. յօդուածին վրայ ակնարկութիւն մը չունեցաւ. վարձարաններն երկու կամ երեք տեսակ են. խնդիր անգամ չըրաւ. ուրեմն անոր վրայ գիտողութիւն մը չունի: Լոկ իր առաջարկութեանցը գալով, և կէտի կը վերածին անոր. Ն. կատաշարիլ հոգաբարձու.



Թիւնները վերցնել, և անոնց տեղ տնտեսական տարատեսակներու տեսչութիւն սահմանել :

Իր այս առաջարկութիւնն ահա տեղ ունի սոյն ծրագրին 15դ. յօդուածին և անոր յաջորդացը մէջ . երբ այն յօդուածոց վիճարանութեանը վրայ խօսորնք՝ կրնանք պէտք եղած բարեփոխութիւնն ընել :

2. Կառավարիչ Ուսումն. խորհուրդն Ա. Է. ֆային ժողովէն ընտրել և Բազ. ժողովոց հետ ունեցած կապերէն արձրել :

Ասի սահմանադրական խնդիր մ'է, որ վերաբնութեան կը վերաբերի . և արդէն Ժողովն այդ կէտին վրայ խօսած է . նոր առաջարկութիւնն մը չէ այդ . փորձառութեամբ որ ինչներէն եկած է արդէն : Բայց կ'երևի որ արդի Ուսումնական խորհուրդն ալ, որոց անդամ կը գտնուի Ա. Կոտուլան Է. Ֆիլիպի հրաժարեալ Բազ. ժողովէն գտնադատուելու իրաւունք ստացեր է . ո՛ր է Եսայիոց Նազարիթ Է. Ֆին . պէտք էր ըսէր այս գտնադատ :

ՁԱՅՆՆԻՐ. — Դրութեան գէժ է գտնադատը և ոչ մարդոց :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է. Ֆ. — Պէտք է գիտնալ թէ զրութիւնը չէ միայն յանցաւոր, այլ մարդիկ ալ յանցաւոր են երբ մանրամասնութեան մտնենք . կրնամ հաստատել զայս : Բայց այս վիճակին ալ գարտան կայ . երբ վարչական կանոնադրութիւն մը հաստատուի, անով Ուսումն. խորհուրդոց արտօնադրութեան ընթացքն աւսահանը կրնայ գտնուիլ, և պէտք եղած ազատութիւնը տրուիլ, որ արդէն Սահմանադրութիւնն ալ կը ներքէ : Ուստի Ա. Կոտուլան է. Ֆիլիպի այս երկրորդ առաջարկութիւնն ալ վարչական կանոնադրութեան խնդրոյն կը վերաբերի որնոր արդէն մեր Առեւտրական փառային նախընթաց բացման վերջին նիստին մէջ Ժողովիս յանձնարարած կարեւոր խնդիրներէն մէկն է :

3. Կառավարիչ դատարանութեան համար զրամ հաշիւայթել թէ կ'երբ. սնտուկէն և թէ մտնուոր հանգանակութեամբ :

Պոս. մ'առաջ Պիւտնի խնդիրն յաջորդ

նիստին Օրակարգն անցուց . թող պատրաստուի Ա. Կոտուլան Է. Ֆիլիպին մեզ հետ, որ Պիւտնի մէջ դատարանութեան համար յատուկ գումար մը սահմանել տարու ջանք ընենք . այդ կարեւոր առաջարկութեան լուծումը յաջորդ նիստին սրահուած է : Ստանաւոր հանգանակութեան գաղտ, ո՛վ արդէր կրնայ ըլլալ . Ուս. խորհուրդը կրնայ միշտ հանգանակութեան ղրկուիլ, բաւական է որ այդ հանգանակութեան ինչ բանի գործածուիլը կանխաւ որոշուած և ազգին ալ պէտք եղած վտանգութիւնը տրուած ըլլայ : Ինչպէս Ասիոց սովեւոց համար մինչև 5 հազար սոկի հանգանակեցաւ :

ԱՅՏՈՒԼԱԷ՝ Է. Ֆ. — Ինչ միայն սնտուկի խնդիր մ'ալ ըրած եմ, այն ալ պէտք է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է. Ֆ. — Արդէն իրեն համար միայն սնտուկ ունի, բաւական է որ զրամ միայ անոր մէջ, սնտուկին լիցուցութիւնը ինչ կ'արժէ :

6. Կառավարիչ ոչ միայն մարի սյլ և սրտի դատարանութեան հոգ ունենալ :

Մեր ծրագրին 6, 7, 8, 9 յօդուածներն աւանանց տեսակին կը վերաբերին, ինչ որ կը հասկնայ որտի դատարանութիւնն ըսելով կամ ինչ որ պէտք կը տեսնէ այդ դատարանութեան ծաւարմանը, կրնայ առաջարկել նոյն յօդուածոց քննութեանը մէջ :

Ահաւասիկ այս և կէտերն են, զորս իբրև գտնադրանութեան հիմունք և միջոցներ կ'առաջարկէ Ա. Կոտուլան Է. Ֆիլիպին, որոնց երկուքը ներկայ ծրագրին մէջ տեղ ունին, միւս երկուքին մէջը վարչական կանոնադրութեան կը վերաբերի, որոց սրահուած արդէն զգալի եղած է, և մէկն ալ Պիւտնիին որ յաջորդ նիստին Օրակարգն է :

Հետեւաբար այս ծրագրին վրայ մեր վիճարանութիւնը կրնանք շարունակել յօդուած առ յօդուած . և ինչպէս ըսի ի սկզբան, նորէն կը կրկնեմ, այս ծրագիրը բնաւ աշխատողի մը կամ ձեռնհասի մը ձեռքը չի կոպէր, և մինչև երբորդ ընթերցուած ժամանակ ալ ունիք, ով

որ կուզէ, կրնայ իր ծրագիրը բերել, որ նախաքննութեան յղուելէ յետոյ Ժողովիս քննութեանը կենթարկի : Բայց աւանց նոր ծրագիր բերելու, եղածը մերժել առաջարկիլը և առանց մանրամասն քննութեան, որ արդէն որոշուած է, կը նշանակէ դատարանութեան խնդիրը յետաձգել . ուստի ես կրկնելով հրահանգին ու յօդուածին բարեփոխութեանը մասին առաջարկութիւնս, կը խնդրեմ որ այսօր գէթ այդ մէկ յօդուածը բուժի դնենք . և բան մը սկսած ըլլա՞նք :

ԱՅՏԵՆԱՊԵՏ Է. Ֆ. — Եթէ թիւերն իս բաւական չէ՛ ինչպէս կրնանք բուժարկել, որովհետեւ երեւոյթանք գրեթէ կ'ստուակէս մեկնած են :

Դիւանը համրեց մնացեւոց թիւը և 24 հոգի գտաւ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է. Ֆ. — Եթէ առաջին յօդուածին մասին ըրած բարեփոխութեանս վերայ դիտողութիւն ընող չկայ, ըսել է ամենքս ալ զայն ընդունած ենք արդէն, ուստի կառավարիչն որ զայն բուժի դնէք :

Առեւտրական Է. Ֆիլիպին տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ, Հրահանգին առաջին յօդուածն Փափազեան Է. Ֆիլիպի բարեփոխութեանը բուժի դրաւ, որ է :

«Յօդ. 1. — Այդպիսի վարժարաններն երեք տեսակ են .

Ա. Ընտելարան կամ ծագեւոց .

Բ. Նախակրթարան կամ նախնական վարժարան .

Գ. Ուսումնարան կամ երկրորդական վարժարան :

Ժողովը միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑԱԻ իր սոյն Ա. յօդուածը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է. Ֆ. — Յաջորդ 2դ. 3դ. և 4դ. յօդուածներն ալ կառավարիչն իր քննութեամբ բուժի դնել, եթէ անոնց վրայ դիտողութիւն ընող չկայ :

ՁԱՅՆՆԻՐ. — Այս, այս, դիտողութիւն չի կայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. Է. Ֆ. — Ես գիտեմ որ վիճարանութիւնը 5դ. յօդուածին պիտի սկսի, սոյն վրայ արդէն բաժանեալ ենք մասնաւորաբար սոյն խնդրոյն սրտաւորած միջոցնաւ, ուստի կը կրկնեմ այդ երեք յօդուածներն ալ բուժի դնելու առաջարկութիւնս :

Կարդացուեցան Հրահանգին 2դ. 3դ. և 4դ. յօդուածներն որք են՝

«Յօդ. 2. — Սոյն վարժարանները թէ աւանդինն և թէ միեւնոյն յարկի տակ կրնան ըլլալ :

«Յօդ. 3. — Երբ միեւնոյն յարկի տակ ըլլան, ըստ կարեւորն հոգ տանելու է որ Ուսումնարանը բաժանեալ ըլլայ Նախակրթարանէն . իսկ Ընտելարանը միշտ բաժանեալ պիտի ըլլայ աւանդին սրահով կամ սենեակով :

«Յօդ. 4. — Վարժարանաց շէնքը և սյլ տանն կարողադրութիւնները պէտք է որ ըլլան ողջաբանի կանոնաց համեմատ : Ուստի նոր շէնքուելիք վարժարանի յատակագիծը պէտք է ներկայացնել Ուսումնական խորհուրդոց, և անոր հաստատութիւնն ստանալ . իսկ արդէն շէնքուածներն ալ պէտք է ըստ կարեւորն յարմարցնել ողջաբանի կանոնաց :

Սոյն 3 յօդուածներն ալ աւանց որ և է

գիտազուրկեան հետզհետէ բուժի դրուելով, միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՆ Ժողովին :

Կնայեալ յօղուածոց բնութիւնը յառա-  
ջիկոյնն մալալ:


Ստեանը գոյուեցաւ ծամն 10 լն:

ԱՏԵՆԱԳՊԻՐ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ս. Սրախաչեան


Կորեան



*[Faint, mostly illegible text in the left column, appearing to be bleed-through from the reverse side of the page.]*

*[Faint, mostly illegible text in the right column, appearing to be bleed-through from the reverse side of the page.]*





ԿՐՐՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

|               |         |               |            |
|---------------|---------|---------------|------------|
| 1 . Խորհն     | Եպիսկ . | Մխիթարեան     | Ա. ԱՅՆԱՊԵՏ |
| 2 . Յակոբ     | Վարդ .  | Փարսադեան     | Ա. ԱՅՆԱՊԵՏ |
| 3 . Գէորգ     | Ա.գ. Բ. | Արծրունի      | Բ. ԱՅՆԱՊԵՏ |
| 4 . Խաչատուր  | » »     | Տ . Գարրիշեան | Բ. ԱՅՆԱՊԵՏ |
| 5 . Գարրիշեալ | » »     | Չիչեքեան      |            |
| 6 . Յովաննէս  | » »     | Մկրեան        |            |
| 7 . Արտատակէս | » »     | Քարակեօճրեկի  |            |
| 8 . Պետրոս    | » »     | Փարսադեան     |            |
| 9 . Իգնատիոս  | » »     | Մանաթեան      |            |
| 10 . Գրիգոր   | » »     | Ալթեան        |            |
| 11 . Աթանաս   | քհնյ    | Ս . Խաչ Ղաւջ  |            |
| 12 . Մեսրոպ   | »       | Երէցեան       |            |
| 13 . Միքայէլ  | »       | Պաղտոս        |            |
| 14 . Զարարիա  | »       | Բերայի        |            |


ՀԱՅԿԱՅԵԱՆ ԵՊԻՍԿՈՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԵԱՆ ԵՊԻՍԿՈՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Ստորագրւած է 1880 թ. Դեկտեմբերի 15 օրը  
Եպիսկոպոս Գրիգոր Ալթեան

|    |            |    |
|----|------------|----|
| 1  | Գրքի մասին | 1  |
| 2  | Գրքի մասին | 2  |
| 3  | Գրքի մասին | 3  |
| 4  | Գրքի մասին | 4  |
| 5  | Գրքի մասին | 5  |
| 6  | Գրքի մասին | 6  |
| 7  | Գրքի մասին | 7  |
| 8  | Գրքի մասին | 8  |
| 9  | Գրքի մասին | 9  |
| 10 | Գրքի մասին | 10 |
| 11 | Գրքի մասին | 11 |
| 12 | Գրքի մասին | 12 |
| 13 | Գրքի մասին | 13 |
| 14 | Գրքի մասին | 14 |
| 15 | Գրքի մասին | 15 |
| 16 | Գրքի մասին | 16 |
| 17 | Գրքի մասին | 17 |
| 18 | Գրքի մասին | 18 |
| 19 | Գրքի մասին | 19 |
| 20 | Գրքի մասին | 20 |
| 21 | Գրքի մասին | 21 |
| 22 | Գրքի մասին | 22 |

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ



ՄԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՅՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅՍՏԿԱՑԵՍԼ



Կը ծախուի ի Դիւանատան Գատրիարքարանի . և Ղալաթիոյ Ս  
ԼՈՒՍԱԼՈՐԻՆՆ ԵԿԵՂԵՑԸՅՈՅ ԲԱՆԿԱՂԸ և Հայ գրալատարաց քով .

